Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-23/3-Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 30 հոկտեմբերի 2023թ.
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ն.Ավետյանը, Ս. Նազարյանը և Ս. Աբազյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզում Թալինի 1 պոմպակայանի (Արագածավան բնակավայր) վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-23/3-Փ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացումը նախատեսված էր 2023թ հոկտեմբերի 18-ը ժամը 16:00-ն /հրապարակվել է 10.10.2023թ./, սակայն բացող և գնահատող անդամների մոտ Armeps համակարգում առաջացել է տեխնիկական խնդիր՝ առաջադրանք մտնելիս նշվում է. «Դուք այս գործողության համար բավարար իրավունքներ չունեք»: Առաջացած տեխնիկական խնդիրը կարագավորելու համար Ջրային կոմիտեն գրությամբ (N 03/17/5468-2023) դիմել է լիազոր մարմին: Լիազոր մարմինը թիվ /26-1/20938-2023 պատասխան գրությամբ պատասխանել է, որ տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել, միաժամանակ առաջարկել գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով, քանի որ ՋԿ-ԳՀԾՁԲ-23/3-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են Armeps համակարգի հայտերի հրապարակայնացման <<Հայտեր>> բաժնում, ինչպես նաև դրանց ներբեռնման մասին տեղեկատվությունն առկա է համակարգում:

ՋԿ-ԳՀԾՁԲ-23/3-Փ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Ջրարբի» ՍՊԸ	Ք. Երևան, Նանսենի 6, բն. 24 Հեռ. 094643117	jrarbi.j@gmail.com
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Ք. Երևան Կոմիտաս 54 Հեռ. 093800009	ekspertizaproektov@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 նախահաշվային արժեք-1 120 000 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» - ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԹԱԼԻՆԻ 1 ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ (ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ				

1	«Ջրարբի» ՍՊԸ	670 000		670 000
2	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	850 000	170 000	1 020 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված փաստաթղթերի առկայության և ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ

ՋԿ-ԳՀԾՁԲ-23/3-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշումը

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-23/3-Փ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ջրարբի» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Ս. Ասրյան

անդամներ _____ Ն. Ավետյան

_____ Ս. Նազարյան

_____ Ս. Աբազյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան